

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին Կ. Պոլսոյ համար 450 զշ
» Գաւառաց » 460 »
» Պատր երկիրներու » 480 »
» Եղեմանայ Կ. Պոլսոյ » 75 »
» Գաւառաց » 80 »
Խաւարանիւր թերթի դին 60 փր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-
մար 60 փարսոյ, աւելի անգամնե-
րու համար 45 փարսոյ:



Լ Ր Ա Պ Ի Ր

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Խորհրդի ի ծնէ անկատար էակ մ'է, բայց ամեն արարածներէն աւելի կա- տարեղանործութիւն ու յատկութիւն ունի: Իւր կատարելութիւնը համընթաց են, կամ իրարու պատճառ ու արդիւնք են. ուստի հոն որ պատճառն ու արդի- ւնքն այս փոխադարձ ազդեցութիւնը դորաւոր է, հոն ուրիշ տեղէ աւելի մարդկութիւնն ի կատարելութիւն կը ձգտի:

Դէպ ի կատարելութիւն աստուղ այս միւսը իւր ստիպող ազդեց մէջ ա- ւելի կը տեսնուի:

Ինչէն զինչ աչքը ու մտադրու- թեամբ նայինք արարածոց վրայ, կը տեսնենք որ ճարտարութեան եւ ար- ւեստի տրամադրութիւնն ու ձիւքն աւելի ունենցող տեսակը՝ միւսներէն աւելի ընկերակցութեան յարմար է:

Այս յարմարութիւնը մեզուներէն, միջկենտրոն չնկերներէն, թռչուն- ներէն ու կառնիկներէն աւելի մարդն ունի. ընկերակցութիւնը կատարե- լութեան հարկաւոր մէկ պայմանն է. այն յարմարութիւնն է, առաջ կուգայ ժողովուրդու պէտքը, եւ ապա կը ձե- ւանան ընտանիք, որոց բազմութիւնն ընկերութիւններ յառաջ կը բերեն, եւ ազգութիւնը՝ որը ընկերութեանց բազմութիւնէն կը բաղկանան. արդ- արեւ մը՝ եւ թէ պէտք է՝ աւելիստե- անաւորելով՝ ընկերութիւն մը կազ- մուած տեղը կառավարութիւն մը ան- հրաժարելի է:

Առանց կառավարութեան ժողո- վուրդ կամ ազգ մը կանգուն չլինար մնալ, վասն զի առանց գլխի մարմնոց մը կը նմանի այն առեւն:

Մեր մարմնոց բոլոր անդամոց դոր- ժողութեանց ու պաշտօնին կարողու- թիւնները գլխին կուգան. միւս ան- դամներն ամենքն ալ անկէ կախում ունեն. բայց իրարու հետ առեւցած յա- րաբերութիւնն ու կապերն այնքան սերտ է, որ առանց մէկուն՝ միւսին գործը անկատար կըլլայ:

Ասկէ կը հասկնուի որ ազգերն ի- րենց կառավարութեան նկատմամբ մարմններ են, եւ կառավարութիւնն ալ իրենց կառավարեալներուն նկատմամբ գլուխներ:

Հասարակագիտութիւն, մենայն- տութիւն, բնապետութիւն, կառա- վարելու երեք գլխաւոր ձեւեր են, եւ աշխարհի ամեն ազգերն այս եւ- րեք ձեւերուն մէկուն միջոցաւ կը կառավարուին, անոնց յատուկ եղած հանդամանաց մէջ այս ինչ կամ այն ինչ փոփոխութիւնները մտցունելով:

Ժողովուրդը իրենց կառավարող- ներուն որքան որ անասման իշխա- նութիւն տալէ պէտք է զգուշանան,

այնքան ալ կառավարութիւնը առ ժո- ղովուրդն անասման ազատութիւն տա- լու պատրաստ պէտք չեն դնուիր: Վա- րեն զի թէ մէկ եւ թէ միւս պարագային մէջ երկու կողմն ալ կատարելապէս առա- ճին ինչ կըմար ըլլալ: Մարդն ազա- տութեան յարմար պէտք է ըլլայ եւ ազատութիւնն ալ մարդուն. ոչ ան ա- րոր ձեռքը խաղալիք ըլլալու է, ոչ այս անոր ձեռքը գործիք: Պէտք է մարդն այն վիճակին հասած ըլլայ որ իւր ա- մեն պարտաւորութիւնները կարենայ ճանաչել առանց ստիպանալու, որ իւր ամեն իրաւունքները կարենայ վայելել առանց զեղծանելու: Եւ յարային հին ազգաց կառավարութեանց առաջին ձեւը հասարակագիտութիւնն եղած է, որովհետեւ մարդկանց բնաւորու- թեանը յարմար գլուխութիւն մ'է. մար- դին իրմէ կախալ ու անկախ, ահա- ւասիկ վիճակ մը, որուն կանխիկ անոր սիրտն ու բնութիւնը. բայց որովհետեւ միայն բնականին յարմար ըլլալ բա- ւական է, այլ նոյն իսկ մարդուն, եւ այս ալ իրեն, ուստի այս պատճառաւ հասարակագիտութիւնը շատ անգամ յեղափոխութիւններէ յաղաղուելի են, եւ անիշխանութիւնն ու ռամբարտ- թիւնը՝ որ անոնց համար խաղժ են, ի- րենց դէմ ելնելով, միշտ ի նպաստ ել- նելու ընդունակ եղեր են:

Գաղղիացի ազգը՝ որ բնութեամբ աշխարհի ամեն ազգերէն աւելի կըր- քոտ, գիւրգալիւ ու սեգ ազգ մ'է, ամեն ծայրայեղութեան, ամեն անուի- արկան հեղուկութեան զիջում ըրած է՝ իր մէջ հասարակագիտութիւն հա- տատելու համար: Իւր բնաւորութիւ- նը մեզ այնպէս կարծել կուտայ որ ազատութիւնը իր սիրէ՝ չէ թէ Միաց- եալ Նահանգաց ժողովրդեան արտօնը, յորում հաւատարմութեան եւ եղբայ- րութեան զգացումը միւսները կը կան- լան, այլ կը սիրէ այն արտօնը որ ամեն հրամանն ու ամեն գերակայութիւն կանգունէ:

Գաղղիական ազգը՝ մէկ դարէ ի վեր գրեթէ կառավարութեան նորա- նոր ձեւեր հնարելէ եւ զանազան տեղիէն վերադարձելէ պէս հանդիմել ու հանելէ ետքը, ահա այս տարի ամայս 24-էն (սեպտ. 5) ի վեր հասարակա- պետութիւն հրատարակեց, եւ այն մեծ գործը՝ զոր 1792-ի յեղափոխու- թիւնն այնքան արկանահեղութեամբ չկրցաւ ընցունել 1870-ի օրոք, քո- րուօսական պատերազմը ընցուց:

Մերկաններէ թուականներ են ա- անք Եւրոպայ համար. եթէ պատե- րաբար ազգաց ճակատագրին մէջ ըլ- րալ, պիտի բռնէ թէ ինքն է ամենց ճակատագիրը փոխողը. բայց տեսէք ինչէր կընայ ընել մէկ ամայ մէջ:

Իւր ազգեցութիւնը կայծակի ա- րագութիւնն ունի. եւ թէպէտ ար- դիւնը միշտ ողբալի է մարդկային սե- ւին համար, սակայն հոն ալ չարը բար- եաւ կը փոխարինուի:

Գեռ պատերազմը նոր սկսեր էր, եւ կընէինք մենք մեղի. « Ժողովուրդ- րադիկոյ, եթէ յաղթեն » պիտի փառա- ւորուին. բայց ըստ հպարտութիւնը- չալիտի սիրենք, վասն զի ըստ փառամոլ- դիւնի պատմանքի է. վասն զի ըստ ար- եամբդ անոր դաճը պիտի ամայացունե- անք յաղթուիս, կընէինք դարձեալ, պէտք չէ ցաւիլ ըստ վրայ, վասն զի բռնաւորի մը գոռողութեան գործիք եղար. վասն զի փառք մը քնդի կայսաէ- այն փառք որ անձնական կառավա- րութեան վրայ յաղթանակելով պիտի ստանաւ:

« Իր յարգէնք դեքդ. կը սիրենք ըստ վրայից, Մոնթէսքիէօ, Լամարթի- նըդ, Թիէրդ, վերջապէս ըստ մատե- նագարանդ, վասն զի անոնք մեղի ի- մացական մտուղ ջամբեցին կը սի- րենք զանոնք ինչպէս երախայք իրենց սանդուղները կը սիրեն:

« Իր գովինք անձնականութիւնդ, քաղաքակրթութիւնդ, բայց կը սի- րենք Գերմանական ժողովուրդը: առաւ զազգայնները քեզից յա- ռաջ հոն ծնան. կը սիրենք վրնքը, ո- րովհետեւ արուեստի ու գիտութեանց մէջ ոչ միայն քնդի կը հաւասարի, այլ նաեւ Եւրոպայ ամենէն խորհրդաղ- ղաց ու իմաստասէր ժողովուրդն է, դու մի իկի, եւ կըթուլիւնք քո միտ- թեանդ պահելու ծառայեց. անիկայ բամբուած էր, ու միտ թիւնը կըթուե- լէ յետոյ կը կազմէ:

« Դիւրարթորք արիւնդ շուտով գլուխը կը ցալթի, ու շուտ հեղ դու չես իշխեր քնդի. բայց գերմանացիս սիրտը տաք ու գլուխը գաղջ է. ա- նոր կըքնեն ու գրգռուին կիրթ ու չափաւորեալ են, եւ անընդհատ յառա- ջադիւնութեամբ ինչ կը սիրենք վեր- ջադէն գերմանացին, վասն զի հայուն եւ իւր մէջ ոչ միայն բնաւորութեանը- դարացի յարամանութիւն մը, այլ նա- եւ սերնդական խիստ հին ամանցու- թիւն մը կայ: »

Բայց պէտք է մտածել թէ որքան ալ մեծ ըլլայ զինուղ պայտիւնը ազ- ցաց ճակատագրին վրայ, ի վերայ այ- րը ամենայն պատերազմը մարդկա- յին սեւեռվորացումը կողմնորոշ ամենէն դժուարին է: Գիտութիւններն եւ ար- հեստ ձեռք ձեռքի տուած կը ջանան ամեն բան աշխուժանել զարգարել կա- տարելու գործերուն, կենաց աղբիւրն ու առողջութիւնը պահպանել. բայց կու- գայ պատերազմը, ու թէ գլխաւորութիւն թէ արհեստ իրեն գործակից առած, կը քանդէ կարէ ամեն բան, ու մահ կը սփռէ ամեն տեղ:

Ինչ տեսակ շարժման ենթակայ է մարդկային բնութիւնը որ ծովուն ջուր- քը եւ այլոց հասանքին նման իւր թէ կուգէ վերադառնալ հոն՝ ուստի մեկ- նեցաւ ինչ օրէնք է այն՝ որ մարդ- կային բնութիւնը իւր սահմանին մէջ եւ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս դաճած լրագրաց ճանրու- ծակըը խմբագրութեան վրայ է: Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ ինչ գրութիւն խմբագիր — Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո- լիս, Չինիլի խան, Մատիսի դրաւեն- անքը: Ճամբու ծախքը չվճարուած նա- ծակ չընդունուիր:

Իւր առանցքին վրայ կը թաւալէ. կոր- ծէք թէ այն ալ մարդկանց որքանն եղող մարդակին պէս կըր է: Ինչ ու այսքան ազդեց, ինչ ու այսքան կոտո- րում. ինչ ու այսքան արիւն, ինչ ու այսքան արտասուք: Վայելեալութեան դարերը դիւնք կարդարացունեն, բայց ինչ ըսենք մեր դարուն համար որ ինքզինքը լուսա- ւորութեան դար կը կոչէ:

Քանի՜ բիւրաւոր կենաց արեւներ շլծան. քանի՜ բիւրաւոր մայրեր սուղ- աւին. քանի՜ բիւրաւոր հայրեր կը հա- աւաչեն. քանի՜ բիւրաւոր եղբայր կար- տասունեն. քանի՜ բիւրաւոր ամուսինք ու մանկիւնք կը հեծեն:

Ինչո՞ւ, երկու մեծ ազգաց կտրիճ դաւանե՞ր, ինչո՞ւ. իրարու սիրտը մը- խեցիք ձեր մահաւաք սուկնները. ինչ ու ձեր կողմը բացուած արիւն կը հոսեն. կը լսեմ ձեր հոգեվար ժամունակէ կը- տուրմունքները. հայր իմ... մայր իմ... քոյր իմ... եղբայր իմ... ինչ ու ձեր սի- րտի անուները՝ դորս նուազեալ ճայ- նով կը յիշէք պատերազմաց դաշտին մէջէն, վե՛հ մտքով մ'է որ արդարու- թեան անտանը կը սրնայ: Ձեր տաք տաք տաք արեան շողիւններ, դեռ աչ- քերնիդ չիմակած, տեսէք, ամայացեալ կը բարձրանան յերկինս. անոնցմէ պի- տի ծնանին վրէժխնդրութեան կայ- ծակներ, եւ անիծալարտ գլուխնե- րու վրայ պիտի թափին. յաղթող ու անմեղ կը մեռնիք դուք. վկայ է երկիր, եւ այս յիշատակը բաւ է զձեզ անմահ ընելու համար:

Բայց գերանատարած այդ էակնե- րը մարդկանց մարմիններ են, որոնք փառասիրութեամբ կուրացեալ մար- դու մը համար կենանքերին տուին, ու անարգ բաներու պէս վերապններ կը կոչուին հիմայ:

Այս այն մարդն է, որ շատ ստորին վիճակներու իջնելէ ետեւ, իւր ազգա- կան Պոնաբարդին դաճը յատկեց նենգութեամբ. այս այն մարդն է, որ աման եւ ութը տարի Գաղղիական ազգը գործիք ըրած ձեռքին մէջ, եւ զինքն անոր զբաղման առարկայ չընելու համար ծանր դերեր խաղ- ցուց, եւ անոր դանձն ու դաւաճան արիւնը շուրջաւար փառանք: Այս այն մարդն է, որ յեռանդ խաղաղութիւն կը քարոզէր ու երէկ պատերազմ հրատա- րակեց յոխորտալով. այս այն մարդն է, որ երէկ բոլոր Եւրոպայ թաղաւորաց հրամայել ուղեց, ու այսօր իւր արդա- րակորով հակառակորդին՝ ի յետմի հը- րամանին տակ գերի մ'եղաւ:

Ամպարչութեան արժանի չէ՞ այս հատուցումը. հոս կը կասեմ վայրիկ մը խօսքս Լուի Պլանի տալու համար:

« Սպանիա միթէ Բրուսիացի » պի- տի ըլլար օր մը՝ Հոհենցոլերն անոր վը- րայ իշխելով. բայց Եւրոպայ ազգաց վրայ թագաւորողները միթէ ամենքն ալ անոնց ունենակից են. միթէ Նաթթ

լէօն չէ՞ր դիտէր թէ Անդրիոյ արքունիքը Հաննօլթէն կըսէր, Բրուսինը Սուսայէն, Աւստրիայէն Հելլենտիայէն, Խոսիայէնը Սալոնայէն, Գաղղիայէնը Խոսիայէն: Եթէ ուղէր դիտենայ թէ օտար երկրի մը թագաւորը կանգնած մարդը իւր ընկի երկրին մարդը ըլլալէ ինչպէս կը դատար, թող հեղ մը աչքէ անցունէր իւր հօրը պատմութիւնը, որ հողով պատու Հոլանտայի կըսէր երբ հոն թագաւոր ըլլէն զինքը:

«Արդ հաշուեալ չափազանցութիւն մը կը տեսնուի այն յուզման մէջ, որուն վտանգը մեծցունելու համար հաճոյակատար դործողներ տմեն հընարք կուսանին, որպէս զի ընդհանուր ցատու մը բռնկի, եւ զայրոյթը կը վառեն, որպէս զի ճարտուն ձեռք տանուի:

«Ինչ իրաւաբէ պիտի արդիւնէնը Սպանիոյ՝ որ իր տանը տէր չըլլայ, ոչ ապաքէն իրեն համար մենք այնպիսի օտարականներէն ենք, որոյ նրա մարդկան միջամտութիւնն իրեն յարգողութիւնը եւ նախապէս կը ներկայ տես:

«Գաղղիայ յաղթականութեան իրաւունքն ունենալու դատաւարութեալ է սխառօք, ճշմարիտ դատի մը համար պիտուած ատեն անպարտելի է: Իսկ իւր դէպքերուն անձնական կըրքերէն մուրհակով նպատակի մը ետեւէն ինկած ատեն՝ ձախողութեանց եւ յուսահատութեան մէջ կը գտնուի: Սօցիալիստ Կուսակցանք արդարեւ թեան համար ու յաղթեցինք, յաղթութեանցը Մեքսիկայ, վասն զի արդարեւ թեան դէմ էինք:»

Ի՞նչ Հաստատուելու Լուի Ֆլանսի այս խօսքերը, ո՞վ չդիտէր թէ ի սկզբան պատերազմը քաղաքացիական պատերազմ մ'էր, եւ ոչ ժողովրդական՝ որ յետոյ եղաւ, եւ երբեք ազգային, ինչպէս է հիմա:

Տարուան սկիզբները հասարակական գեղացիական միջոցը Նարթիօնի խաբխուր վաճը ցնցեց: Հաղիւ թէ ներքին խռովութիւնը դադարեցան, եւ ահա ժողովրդեան արեւմտը իւր վտանգէր անորոշեցին: Եւ յետոյ իւր հետ մըտնող Նարթիօնը՝ քաղաք իւր հետ մըտնող ժողովրդը դժուարին ձեռնարկի մը մէջ, որ իւր դահուլն ու Գաղղիոյ ամեն հնարաւոր զոհողութիւններով կը սուսի:

Ազգ մը որ իրաւացի դատ մը կը պաշտպանէ՝ անպարտելի է, բայց բանակը մեկնած օրը, ինչ էր այդ իրաւացի դատը որ Ազգը չէ խոտորեցնած: Թիքէ իւր դործակատարները «Բրուսիայ Գաղղիոյ կապառնայ, ազգային պատերազմ տանողի մէջ է, մեր պատմութիւնը օտար յաջողակե՛ղ կուղէ:» Եւ ըսելով չէ՞ր որ ժողովրդը ուր հանեցին: Երբ այդ խօսքերը կարդացինք, մեր զգացողութեան վրայ այն ատիկան ցրտութիւն տարեց, որ մեզ թուեցաւ թէ Նարթիօն՝ անորոշական մարդու մը պէս, որ դահուլի մը քար դուրծելը կըսէր, որ զորով ուն չլի մը մը արտաբերած էր զանոնք, եւ դեռ պատմութեան դատ մը բացարձակապէս իւր պաշտպան դատ մը հաւատարմութիւնն ու գերմանացւոյ յաղթանակը կը վճէր: Ի՞նչ դատը ազգինը չէր, եւ ազգին բանակները յաղթութեան, ուրեմն դատը անիրաւ էր, վասն զի Նարթիօնի քաղաքացիական թեան դատն էր անիրաւ:

Բնտի եւ ինչ ատեն Գաղղիական բանակաց կորուստը տեսաւ, երբ տեսաւ ոչ Բրուսիայի Գաղղիոյ մէկ իններորդ մասին տիրեցին ու դէպ ի փարիզ կը յաւաքանան, երբ որ պարտութեան զինքը բանակին ընդհանուր հրամանատարութիւնէն հրաժարելու ամեն բան նոր կապուած ժողովին ըս-

կըտաւ անօրինիլ երբ ազգը տեսաւ թէ խաբուած էր, երբ որ «մարդասպան» ու սրիկայ բառերը ականջին հասան, երբ տեսաւ որ այս դէպքերը իրեն համար սոսկալի աւարտ մը կրնան լին ունենալ, երբ երեւակայեց իւր պաշտպան իրեն բանտ եղած եւ վտանգէն հանդիս դատատան պատրաստութեան իրեն, իւր դրդումը իրեն սկսած արեւմտ շտապարագով մէջ սոսկ զինուորի պէս մարտնչելու մեղքը ներքին յաղթանակը սեպտեմբեր 2-ին զնայ ինչ օր թագաւորին անձնատուր եղաւ Սէտանի առջեւ, ուր դատուող Գաղղիական զօրաց մեծ բանակ մ'ալ իրեն հետ եւրոպ զինավորակ իրաւար:

Իրքան բարձրանալու պէս մեծ ընդհանուր վրայ, այնքան ահաւոր եղաւ իւր անկումը, իւր սրովը զարկաւ ինքզինքը, եւ սրքան չէր ուզէր այնքան ինքնասպան մը եղաւ:

Իւր անկումը թիւններն երբ մեծ իրաւունքներ ցոյցեցին, Գաղղիոյ հասարակականութիւնը Գերմանիոյ յաղթանակին ու մեծութիւնը, սկսած Գաղղիոյ անհաղաղաւ իշխանութեան անկումը: Բոլոր կաթողիկոսութեան եւ նոյն իսկ քրիստոնէութեան ազատագրութիւնը:

Իցիւ թէ այս մեծ պատերազմը զերջինը ըլլար բոլոր աշխարհի մէջ, եւ հաշտութիւնն ու ժողովրդները միանգամայն միշտ ազատուին: Իցիւ թէ Բրուսիայ անմեղ կենաց այս անհոն զոհը ակնդարաց խաղաղութեան վերջնագին ըլլար, եւ անոր պարագան գործը ամեն ազգաց հետ մեք եւս օտարականութիւնը ու ըսէինք: «Ահա մարդուն կատարելութեան դարձակութիւնը» Մ. Ն. ՆԱՐԹԻՕՆ

Գաղղիացւոյ երկրորդ մեծ բանակին ջնջուելէն ետեւ՝ Բրուսիայի քրեանց յաղթական ընթացքը կը շարունակեն փարիզի վրայ:

Բրուսիոյ թագաւորն իր յաղթութեանց արդիւնքը չուզէր իր կանխաւ ըրած յայտարարութեան զոհել թէ եւ Պ. Ժիւլ Ֆալլէ, թէ եւ աշխարհի հասարակաց կարծիքը, թէ եւ պատմութիւնն ու ազգային այն յայտարարութիւնը կը յիշեցնեն եւ պիտի յիշեցնեն: «Ի՞նչ պատերազմն Գաղղիացւոյ ազգին հետ չէ, այլ Նարթիօնի հետ է ըսեր էր»։ Հիմա Նարթիօն չըկայ, կայրութիւն ալ չկայ, բայց Բրուսիոյ թագաւորը դարձեալ պատմական լեզուներով փարիզի վրայ կը քալէ, ուր այս ժաման հասած է:

Անշուշտ Բրուսիոյ թագաւորը շատ զգացած է հիմա այն յայտարարութեան վրայ, զոր պատերազմին սկիզբն ըրած էր չյուսալով որ աշխարհ արագ եւ զինքէն հրաշայի յաղթութիւններով իր զինքերը պիտի պահուէին: Ասկէց զատ ինքն իւրովին կրնայ իր այն յայտարարութիւնը գործադրել, առանց իր պաշտօնէն, զօրաց եւ Գերմանական ազգին հաւանութեանը:

Պ. Ժիւլ Ֆալլէ շրջաբերական անպատասխանի մնաց: Անդրիոյ կառավարութեան՝ ի դիմաց համայն չեզոք տէրութեանց առաջարկած զինուորին ալ անպատասխանի մնաց: Բրուսիոյ՝ հաշտութեան առաջարկութիւնները փարիզի մէջ միայն պիտի ընդունի, եւ հոն պիտի կնքէ հաշտութիւնը: Այսպէս րոտմէ Պ. Պիամարք, եւ այսպէս պիտի ըլլայ:

Բայց միւս կողմէն Գաղղիացիք ալ շատ միտք չունին Բրուսիացիները փարիզի դռներէն ներս հիւրընկալելու, 3000 թիւ համալիր պարտատու են զանոնք սղջունելու համար: Բնտի պատրաստութիւնը այս արեւմ-

ուշտ եղիւրդութեան երկրորդ արարութեան ալ տեսնուաւ, որ քանի մ'օրէն պիտի սկսի:

Վերջին լրագրաց խօսքին նայելով, Գերմանացիք ահագին մեծութեամբ թնդանալով մեքենայներով Գաղղիայ կը տանին Մէյցի եւ փարիզի պաշարման քարտէսը համար: Միւս կողմէն Գաղղիացիք ալ ահագին մեծութեամբ նոր Միթրայեթօններ շինեցին, որք 99 ձիւն զօրութիւն ունեցող չորհրդարժ մեքենայներու միջոցաւ կը շարժին, եւ փարիզի բերդերուն վրայ դրուելով բրուսիացւոյ բանակին դէմ պիտի գործածուին:

Պիւսէլի Լեօ լրագրին հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Սէտանի պատերազմին եւ Նարթիօնի անձնատուր ըլլալուն վրայ:

Վերջին ճակատամարտը սեպտ. 2 առաւօտեան ժամ չորովն (արշալոյսը դեռ չ'ազած) սկսաւ Սէտանի պարիսպներուն առջեւ, եւ կէս օրը երկու ժամ անցնելով դադարեցաւ: Ժամ մը ետքը նորէն սկսաւ նոր կատարելութեամբ, եւ երկու ժամէն վերջացաւ: Մար—Մարսն եւ իր զօրքերը Սէտանի մէջ ձգուած եւ Բրուսիացւոյ 250 հազար զօրքերէն պաշարուած էին, այնպէս որ չէին կրնար երկու օր դիմանալ:

Ժամ մը ետքը անձնատուութեան բանակցութիւններն սկսան:

Կայսեր Սէտանի մէջ ըլլալը չէին դիտեր Բրուսիացիք: Յանկարծ ընդհանուր ցնծութեան արդարեւ մը բըրդաւ բոլոր բանակին մէջ, Նարթիօնէն ինքնազիր նամակ մ'եկեր էր Բրուսիոյ թագաւորին, որուն մէջ, Բրուսիացւոյ բարձրաստիճան զինուորականաց խօսքին նայելով, այսպէս կըսէր կայսրը: «Չկրնար իր բանակին դրուել մեռնիլ իր սուր Բրուսիոյ թագաւորին ձեռքը կը յանձնէր»:

Բրուսիացւոյ զօրքերուն ուրախութիւնն այն ատիկան մեծ էր, որ զինուորները զէնքերէն կը նետէին ու իրար կը համարէին, պատերազմը վերջացած համարելով, Գիւլ մ'ետքը Բրուսիացւոյ Նուագադրանքը՝ Մարսէ յետեւ եւ Բարթոն Բուր Լա Սիլի Գաղղիական երգերը դարձել սկսան, բայց թագաւորին հրամանաւ իսկոյն դադարեցուն: Երբ լսուեալ յաղթանակը դժբաղդութեանը լինումանք կը համարուէր:

Շատեր Պիամարք կոմսը չըմտաւ տեղով կը շարժուէին զինքը:

«Պարոններ, պատասխանեց Պ. Պիամարք, այս պատերազմին յաղթութեան մէջ ես արդիւնք մը չունիմ: Թագաւորին եւ Միթրայեթի դապեղ, եւ բան մը չեմ ըրած: Իսկ ըրածս այսչափ է միայն որ հարաւային Գերմանիոյ տէրութիւններն իրենց հօր օժանդակութեամբ մեզ օգնեցին, եւ այս վերջին ճակատամարտին յաղթութիւնը Պալիէրացւոյ եւ Վիլհելմի միջոցով քաջութեանը պարտական ենք:»

Կայսրը վստահեցաւ էր, հետեւեալ օրը՝ ուրբաթ՝ Բրուսիոյ բանակակիցները գնաց՝ առաւել իրենց այցելու քան թէ գերի:

Նարթիօն բաց կառքի մը մէջ նստած էր քանի մը զօրապետներու հետ, որոց մէջ Լըպլէօն եւ Ֆելէքս Տուէ ճանչուեցան:

Կատքին առջեւէն երկու Դահլան կերթային, եւ քովերէն ալ կայսեր ըստաւարները կանանց եւ ոսկեճամուկ համազգեստներով Նարթիօն խիստ հանդարտ էր, եւ սիկար կը ձիւէր:

Պիւսէլի Լեօն Պիւլ լրագրին թղթակիցը՝ որ սեպտեմբեր 1-ին Սէ-

տանի քով տրուած ճակատամարտին ներկայ գտնուելու է, կըսէ թէ կէս օրին մօտ Գաղղիացիք յաղթող էին, եւ կուր պահ մը դադարեցաւ: Բայց քիչ մը ետքը Բրուսիացւոյ նոր զօրաբանակ մ'օգնութեան հասնելով գործը փոխուեցաւ:

Սէտանի անձնատուութեան համար կնքուած պայմանագրութեան երկրորդ յօդուածն ու շարունակեալ արժանի է: Յիշեալ յօդուածը կըսէ թէ Գաղղիական զօրաց քաջաբար կուսեալուն ի պատիւ, բոլոր զօրապետները հրամանատարներն ու պաշտօնակալներն ազատ թող պիտի տրուին իրենց զէնքերովն ու կարասիներովն՝ երբոր իրենց պատուոյն վրայ խօսք տան դրուող որ ներկայ պատերազմին ժամանակ զէնք չառնուն Գերմանիոյ դէմ, կամ որ եւ է կերպով անոր վրաս չը հասցնեն:

ՀԱՌԱՅՈՒՄԱՆ ՈՒՐԻՔ

Փարիզ 12 սեպտ. առաւօտ. Այս առաւօտան պաշտօնական Որոշարը կը ծանուցանէ թէ Պ. թիէր այս իրիկուն պաշտօնով Լոնտոն կերթայ, անկէց ալ Բեռլինով ու Վիէննա պիտի երթայ:

Պաշտօնէնց եկած տեղեկութիւններէն կը հասկցուի որ Բրուսիացիք այս գիշեր Մ. եւ Մըլէօն մոտ ըլլալու են:

Կօլա կը հաւատէ թէ Անդրիա ծանուցադիր մը զրկելու է չարաթ օրը Բրուսիոյ թագաւորին, յանուն չեղք տէրութեանց զինագադար խնդրելով, բայց թագաւորը դեռ պատասխան չէ տուած:

Մար—Մարսն առ պատերազմի պաշտօնէն զրաժ նոմակը սեպտեմբեր 8 թուականով է:

Վիէննա 12 սեպտ. իրիկուն. Վիլհելմը Լոնտոնէլ թագաւորին խաղաղական զօրաց հրաման ընկալն վրայ, որ Հաւովի հօրը մանեն, Պապը սատկապէս արդարեւ բայց իր զինուորներուն պատուիրեց որ դէմ չկենան: Այսու ամենայնիւ Պապական զօրքերը կուրի կուղեն:

Փարիզ 12 սեպտ. Շաբաթ օրը առաւօտան ժամ 5-ին մինչեւ իրիկուն 9, Բրուսիացիք Թուլի հետ կուսեցան եւ սարկապէն ներս յարձակելու փորձ ըրին, բայց ետ մը դուրսեցան, իրենց կորուստը 10000 մարդ կը հաշուեն մուսալ ու վիրաւոր:

Վերտէօն կը շարունակէ իր զօրքը դիմադրութիւնը: Երկու անգամ հրաւեր եղաւ անձնատուր ըլլալու, բայց մերտեց, եւ մինչեւ վերջը պիտի դիմանայ:

Մոմէտի ալ հինգ շաբթի օրը թըշնամային մէկ նոր յարձակումը ետ քնցց: Բրուսիացիք Մոմ շրջապատած են, Գիւլիէ քով մեծ զօրութիւն ունին եւ Նօպիլի կը մտնեն:

Ֆիլիքսիոյ 12 սեպտ. Հիւսիս քաղաքներէն ոմանք առ ժամանակեայ կառավարութիւններ հաստատեցին: Խաղաղական զօրքերն այս քաղաքներէն մէկ քանին մոտան եւ եռանդուն համակրութեամբ ընդունուեցան:

Ֆիլիքսիոյ 11 սեպտ. Բրակայէն հեռագրով լուր կուտան թէ Պիւլիլի Ամերիկեան դեսպանին հեռագրով հրաման եկեր է իր կառավարութիւնն որ պատերազմը դադարեցնելու հրաւեր կարգայ Բրուսիոյ: Այս րոյը խիստ ծանր ազգացութիւն մ'ըրեր է Պիւլիլի մէջ:

Պիւլիլի 12 սեպտ. Բաղաւորն առ թագաւորին Ուիլսթրա—Ուիլս 11 սեպտ. իրիկուն ժամ 10: Լաօնէն ցաւալի լուր մ'տուինք:

Համար, ուստի միւս ճառերը զանց առնելով՝ յիշեալ օրերը ճառէն ալ քանի մը կտոր հոս կը նշանակենք:

Օրերը Մայիսի 1-ին անգլիական տեւրի ներկայացուցիչները միակ նպատակով է արուեստաշահ դործունէութեան հրահանգել. այս դեղեցիկ դիւտաւորութիւն է, երբ արք իրենց համար քննուած ծաղիկներ կը տնկեն եւ կը բուսցնեն. սակայն մի մոռնաք, որ երբ ծաղիկները կը թառամին՝ փոշի կը դառնան: Աշխատութիւնն է մեր դարուն դրօշը, եւ այդ պատճառաւ կինը իր ամուսնոյն օգնականն է. առնելով կինայ եւ պէտք է աշխատի, եւ ազգային անասութեան մոտաց համաձայն՝ կնոջ աշխատութիւնը պէտք է ի կողմնաւ երթայ (հաճութիւն): Ես կուզեմ պնդել, թէ կնոջ դործութիւնը անանկ կը համեմատուի երկրի զօրութեան հետ, ինչպէս 1 առ 10. Բայց 10 անգամ մէկը 10 կըլլայ: Ռուսնէն եթէ դուք զիմանայ անգործ կը թողնուք, ամեն մէկ 100 կնոջ փոխարէն 10 երկր կը կորսնցնենք (մեծ հաճութիւնն է զոհութիւն): Կինը պէտք է ամուսնոյն աշխատանքը բաժնէ. առ բերելով դիւտաւորութիւն չունիմ անբընական երկրկնը ներքողել, սակայն իմ համոզմունքս է, թէ օր մը վերջնական աշխատութիւնը, երբեք աշխատեցէք թէ հայր մը հինգ աղջիկ միայն ունէ եւ ոչ մէկ մանչ. միթէ ամենքն ալ պէտք է խորտիկ եւ խորթած պատրաստեն: Հիմա կանայք հոս վարժապետական ժողովքի մէջ ենք. կը յուսամ ուսումնարաններու մէջն ալ վարժապետուհիներ տեսնել. դպրոցներուն մէջ մայրերը իրենց վարժապետուհի նստեցուցէք, եւ ան ատեն պիտի կարենաք մայրեր ալ կրթել. (ծափահարութիւն): Վանականութեան վաճառքը, այսինքն ամուսնութիւնը, ողջկանց դպրոցներուն մէջն ալ վարժապետուհիներու նկատմամբ՝ դեռ աւանդութեամբ կը պահուի (հաճութիւն): Երգիկ հասակին մէջ առանձնացած աղջկան համար ամուսնութիւնը՝ դառնութիւնն է մին է. դպրոցին մէջ միշտ ծաղիկը եւ դարդացող կանքը, տուն կը դառնայ Գարուհի խոյրը կը մանէ (ծափ): Արանց եւ կանանց մէջ ճեղք մը բացուեց է, օր է — տաղտկութիւն եւ անդ խոտ թիւն (հաճութիւն): Բազմաւոր ամուսններ հոն կը գտնուին, ուր ամուսններու կրթութիւնը հասարակական է: Ռուսի կառավարիչը,

որ ժողովքը բարեհաճի ամուսնութիւնը դառնապարտել, եւ անոր առջեւն առնուի: Պատկուած վարժապետուհիներու դէմ դուք ֆիզիքական պատճառներ բերուին. սակայն այդ անհրաժեշտ արդեւքները՝ ֆիզիքական առողջ կնոջ համար՝ միայն 10—12 օր կը տեսնեն: Բայց ո՞ր վարժապետը այդչափ միջոցով կամ աւելի եւս հարբուխ չէ ունեցեր. (զօհութիւն եւ հաճութիւն):

Ժողովքը բաց ի Մայրոջի լոյսը եւ Մայրի առաջին ու չորրորդ առաջարկութիւններէն՝ քանի մը ուրիշ առաջարկութիւններ ալ կը նշանակեն. վերջիններու նկատմամբ հետագայ լծիւնը որոշեցաւ: Աղջկանց կրթութեան ատեն, բացի տանտիրէնէն, պէտք է ժամանակի ոգին եւ ընկերական վիճակին ալ ի հաշիւ առնուի, այնպէս որ ամենայն տիկին կարգաւած ատեն իր իրեւ ամուսնոյն՝ տանտիրէնը եւ մօր պարագերը հաւատարմութեամբ եւ ըստ պիտոյից կարենայ ժամանել, բայց եւ ամուսնութեան դէպքին մէջ ալ, անձնական դործունէութեամբ վաճառելով կանք մը կարենայ ձեռք բերել: Աղջկանց քարճաղոյն դպրոցներուն մէջ՝ դառնապարտութեան դիւտութիւնը իրեւ պարտաւորեալ ինք մը համարել: Մեծ քաղաքներուն մէջ պէտք են կանոնադրապէս շարունակ հրապարակական դառնապարտութիւններ բանալ կանանց համար՝ դառնապարտութեան վրայ առանձին մտադրութիւն դարձնելով, մանաւանդ մանկանց լինամատարութեան վրայ՝ իրենց առաջին տարւան հասակին մէջ: Վանական դառնապարտութիւնը չի փոխանակեր կանանց կրթութեան բուն վաճառք տեղը, այսինքն դեղաատանը: Պէտք է կրթութիւն շարունակելով դպրոցները կամ առանձնակի հիմնել, կամ աղջկանց վարժարաններու հետ միաւորել:

Մայիսի 1-ին հետեւեալ է:

Ա Ձ Դ

Կը ծանուցուի արդոյ հասարակութեան թէ Տէտէիանց վաճառատունը Գումրու խանէն ելած ու Չաքմաքը՝ ճըլար Նօրաշու ճատուէրի թիւ 10 Մաղաղան փոխադրուած է:

Ա Ձ Դ

Ղալաթիա Գաֆաֆեան խանը գըրաւանեալ մը բացուած է, թիւ 11, ուր հայերէն, տաճիկերէն եւ գաղղիներէն լեզուներով դատաւարանական եւ առեւտրական գործերը կը լուծուին:

Եւ լեզուներով դատաւարանական եւ առեւտրական ամեն տեսակի գործերը կը լուծուին: Այսինքն, ինչպէս արդեւքները եւ այլն կը խառնուին, եւ եթէ ուղուի կըրկնաւորութեան տեսական ու դործնական կանոնները ցոյց կը տրուին: Ասանցմէ զատ նաեւ առեւտրական օրինաց ու կանոնաց վրայ տեղեկութիւններ կը տրուին:

Այս դրասենեակն ամեն օր բաց է, առաւօտէ մինչեւ իրիկուն, բաց ի կիրակի եւ տօն օրերէն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՆՈՒՄԱՐՆԵՐ ՄԸ

ԻՂՃԻՆ ՊԵՐՁ ԳՆՆՈՒԹԻՒՆԸ

Ի ՀԱՆՈՒՄ ՄԵՐՈՍԱԿԱՐԱԾՈՒԹԵԱՆ

1870 ՏԱՐԱՌՑ

Ա. Ն. Ե. ՀԱՆՈՒՄԱՐՆԵՐ ՎԵՐՈՒՄԱՐՆԵՐ

Ե. ՏԵՄԻՐԱՊԵՏԵԱՆ

Այս Բ. Գրան Կարգընէն է:

Կը ծախուի հայ դրամաճառաց քով զին մէկ քառօրդ Մէճիս:

ԵՐԱՍԹԷ ԴԻՄԱԿՈՎ

Մ Ե Ր Դ Ը

ԱՆՈՒՄԱՐ ՊԵՐՁՈՒՄԱՐ ՀԱՅՈՑ

Լրագրոյ մէջ մասն առ մասն հրատարակուած այս հետաքրքրաշարժ դործը զատ տպուած կը ծախուի լրագրոյս դրասենեակը զին 6 զշ:

ԿՐԹՈՒԹԻՒՆ ՏՆԱԿԱՐԱՆ ԼԵՁՈՒԻ

ԽՐԱՐԱՐԱՆՑ

ՊԵՐՁՈՒՄ Գ. ԳԱՆՈՒՄԱՆ

Գին 7 ՂՃ

Տաճիկական նոր տաճարով արդուած այն դատաւարը Տիւրք-Եւրոպի ընթերցաբանը եւ ամէն հայ դրամաճառաց քով կը գտնուի, օր կը բաժնեկի Օսմանեան տառերուն զօրութեանն ու կցողութեան՝ կանոնները, արդէ ճշով դործածական այլ եւ այլ գրութիւններ, Օսմանեան լեզուի մէջ դործածուած Արաբերէն լեզուի համաձայնութիւն, եւ գեղեցկագրութեան վարժութիւնը ըլլալով համար արարեւնական դրութեանց ձեռագիր կըլլալ թիւնը:

ՀԱՆՈՒՄԱՐՆԵՐ ԳՆՆՈՒԹԻՒՆ
ՏԵՐ ԵՐԱՆԵՐՍ ԲԱՆԱՆԱՅԻ
ՎԱՆԱՐԱՆԵՐՍՏՈՒՅԻ
Ի ՍԱՀՄԱՆՍ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ
ՀԱՅՈՐ Ա.

Կարնոյ դաւաւին մէջ դանուած հին շէնքերէ եւ հին երկաթագիր մատեններէ քաղուած պղծային հընուութիւններու եւ յիշատակարաններու հաւաքածոյ մ'է, որ հնաւեք ազգայնաց համար թանկագին տեղեկութիւններ կը պարունակէ: Ամեն հայ դրամաճառաց քով կը գտնուի զին 3 զրուշ:

ԳՈՒՄՔԵՄ

Կ Ա Մ

ԱՆԴՐԱԼԻԵԱՆ

ՀԱՅ ՄԸ

ԳՐԵՑ Մ. ՏԱՄԱՆԱՆ

Մէտայի Հաղորէթ անուն թերթին բանագործայնքն եւ Պապին անսորթալութիւնը պատմական զօրաւոր ապացոյցներով հերքող հմայակց եւ խիստ հետաքրքրաշարժ տեարակ մ'է, որուն մէջ Հոռոմի անսորթ Պապերէն շատերուն վարքն ալ համառօտաւ պատմուած է:

Ամեն հայ դրամաճառաց քով կը գտնուի զին 3 զշ:

Այս լրագրողաբար կըրկու անգամ կը հրատարակուի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, Բաժանորդագրութեան տեղերն են Կ. Պոլսի Չինիլի խանը փոխարկը թիւ 6 Մախի խորագրատունը. իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները:

ԻՋՄԻՐ. Ստեփան սպա Տէմէնան. ՆԻԿՈՒՄԻՐԻԱ. Թորոս ազա ուկերիչ. ԱՏԱՐԱՋԱՐ. Թարու թիւն աղա Նազարէթեան.

ՏՐԱՊԵՏԱՆ. Խաչատուր աղա Լրեւսեան ԿԱՐԻՆ. Կարապետ յաւատուի Զաքարեան.

ՍԵՐԱՍՏԻԱ. Վարդանէ ֆէնալ Սրգարեան.

ԵԱԵ. Մ. աղա Խաչիկեան.

ՀԱԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մարգարեան.

ԵՐԶՐԱՅԱՆ. Ընթերցարան Թոնդարան.

ՎԱՆ. Գրիգոր աղա Խաչանեան.

Ուրիշ աղագրերէ ստորագրուի ուղղորդեն այս տեղերէն մէկուն հետ կրնան լրջակցիլ:

Խմբագիր—Տիւրք

Գ. Ս. ԻՌԵՆԻՅԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԴՐՈՑ

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԻՍԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԸՆԹԱՅՐ ՓՈՒԱՆԱԿՈՒԹԵԱՆ	
2 ՍԵՊՏԵՄԲԵՐ	
(ՕՍՏԱՆԵԱՆ ԼԻՐԱՅԻ ՀԵՏ 100 ԿՈՒՌՈՒՅԵՆ)	
Լոստրա 3 ամիս զուրուշ	144/1
Մարտիկա » ֆրանք	23.00—
ԸՆԹԱՅՐ ԴՐԱՄՈՑ	
2 ՍԵՊՏԵՄԵՐ	
Անդղ լրա զուրուշ	141
Նաբօլէան ոսկի »	88.45
Իմբէրիալ ոսկի »	89.23
Քըրքից »	51.30
Հինգ ֆրանք »	—
Հինգնոց »	404—403/1
Պղինձ »	143.20

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՍԵՊՏԵՄԵՐ	
Ա Ր Մ Տ Ի Ք	
Ցորին կարծր Պէտարպիա	28 — 30
» » Աղաթ	29 — 31 »
» » Պալլէք	28 — 30
» » Պալլէք	27 — 29 »
» » Թէքիտաղ	27 — 28
» » կալուղ Աղաթ	30 — 32 »
» » Պէտարպիա	30 — 32 »
Կիրքա թուան »	27 — 28 »
Ցորին կալուղ Պալլէք	26 — 28

» » Վառնա	26—28
» » Պալլէք	26—28
Եզիպոտացի թուան »	—
» » Անատոլ »	45
Գարի թուան »	43 —
» » Անատոլ »	—
ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ	
Խ Ո Ձ Ա Կ Ձ Ո Ր	
Պուրա »	զուրուշ
Անատոլ »	—
Քոյո »	ֆրանք ոչ զին կայ
Լալիք »	» եւ ոչ զնոյ
Շալի »	»
Բ Ա Մ Պ Ա Կ Կ Ղ Ր Ո Ր	
Կէլէ »	հօթա 40 —
Խալիք »	» —
Ատան »	» 40 —
Պարակատան »	» 7/1 —
Վրաստան »	» 8 —
Բ Ո Ւ Ր Գ	
Անատոլ »	լուացուած հօթա 44 —
» » չլուացուած »	3/1 — 3/1 »
Բուսէլ »	լուացուած » 42 —
» » չլուացուած »	6/1 —
Վրաստան »	լուացուած » —
» » կէս լուացուած »	46 —
» » չլուացուած »	22 — 23
Տոպրոն »	» 8/1 —
Եսկի Շէլ »	» 6 —

Մ Ա Ձ Ը	
Պարակատան »	հօթա 44/1 —
Անատոլ »	» 40/1 —
Ճերակ »	» 6 —
Ճ Ե Ր Ի	
Գարիքի Ա. տեսակ »	հօթա 46 —
» Բ. »	» 45/1 —
Լեկիլի »	» 46 —
Թոգիլ »	» 43/1 — 44
Աքէլ »	» 41 — 43
Եզիպոտ »	» 44 — 44
Չորու »	» 41 — 42
Թ Ի Ֆ Թ Ի Ք	
Լեկիլի »	հօթա 48 — 53
Գարակատ »	» 48 — 50
Պէրպար »	» 50 — 54
Չէրքէ »	» 48 — 50
Վան »	» 27 —
Ա Յ Ծ Ի Մ Ո Ր Թ	
Ամառ »	7—8/1 կարծ մէկ Ս. Լ.
Եզիպոտ »	» » »
Սիւս »	» » »
Լրագր »	» » »
Գարակատ »	» » »
Ձ Ե Թ	
Մուսնի »	հօթա 7/1 —
Այլ »	» 7 —
Սաք »	» 4/1 —
Միւս »	» 7 —

Պղինձ թողալ երկրին մէջ »	9/1 — 40
Սալիկ Գաւառի մէջ »	հօթա 48 — 22
Ա. Գի »	» 340 — 380
Բիթ »	» 26 — 28
Սուս »	» 4/1 —
Կատապ Սուս »	» 26 — 28
» » Բուսէլ »	» —
Միտաք Պարակ »	» 44 — 48
ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ	
Ղ Ր Ո Ր	
Խաչիլ Ռիւս. տեսակ 100 հօթա »	—
» » Բ. »	» 780 — 850
Ե. Բ. »	» 46
Շաքար փոշի Անդղ. Կնդ. »	232 — 236
» » Գաղղ. »	» —
» » Գաղղ. »	» 280 — 300
Չայ Գի »	հօթա 24 — 24
» Բ. Գ. ծաղիկ »	» 56 — 65
Անդղ զալայ »	Կնդ. 890/1 ր. 920
Պղինձ (պղինձ) »	հօթա 7/1 —
Լեկիլի չլիւս Գի »	» 140 — 130
» » Մարտա »	» 140 — 160
Չինք տալու 100 հօթա ֆր. »	103 —
Երկաթ ձողակ »	» 60 —
» տալու »	» 72 —
» Բուսէլ »	» 70 —
Գարիք »	» 87 —
Բրինձ Խաչիլ 100 Բիթ »	» 40 — 41
Կարդ Եզ Բուսիլ »	» 43/1 —
Խալի »	» 21 — 24